

Հաստատված է

«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2017թ. հունվարի 30-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Մինասյան

«ՇԻՐԱԿԻ Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ակադեմիական աշխատակազմի, ուսանողների և մասնագիտական բնույթի
ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձանց համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն	3
2.Ակադեմիական աշխատակազմի էթիկայի սկզբունքները	6
3.Ուսանողների էթիկայի սկզբունքները	13
4.Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձանց էթիկայի սկզբունքները	18
5.Կարգապահական տույժեր	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում տպագրված նյութերի հիման վրա:

Համալսարանի դերակատարների իրավունքները և գործառույթները սահմանված են ՀՀ «Բարձրագույն կրթության մասին» օրենքով, ՀՀ աշխատանքային օրենսգրքով, համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

Ելնելով ՀՀ «Բարձրագույն կրթության մասին» օրենքի պահանջներից և համալսարանի առաքելությանը համապատասխան որակյալ կրթություն տրամադրելու պարտականությունից՝ անհրաժեշտ է կրթության ոլորտում ունենալ էթիկայի սկզբունքներ՝ բուհի երեք դերակատարների՝ ակադեմիական աշխատակազմի (այդ թվում՝ ղեկավար և կառավարման բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց), ուսանողների և մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնողների համար: Փաստաթուղթը սահմանում է բուհի դերակատարների իրավունքները և պարտականությունները՝ ըստ էթիկական սկզբունքների, ինչպես նաև կարգապահական տույժերի շրջանակները:

Սույն փաստաթուղթը հիմնված է կրթության ոլորտի տասնչորս էթիկական սկզբունքների վրա, որոնք սահմանված են ըստ Եվրոպայի խորհրդի հինգ տասնյակ երկրների համար ընդհանրական «ԷԹԻՆԵՂ» հարթակի: Դրանք են՝

1. բարեվարքություն,
2. ազնվություն,
3. ճշմարտացիություն,
4. թափանցիկություն,
5. այլոց նկատմամբ հարգանք,
6. վստահություն,
7. հաշվետվողականություն,
8. արդարացիություն,
9. հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն,

10. կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական և էթիկական դեկլարում ու կառավարում,
11. որակյալ կրթություն,
12. անձի կատարելագործում և համակարգի բարելավում,
13. ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն,
14. միջազգային համագործակցություն:

Սկզբունքները սահմանվում են հետևյալ կերպ.

1. **Բարեվարքությունը** բուհի բոլոր դերակատարների՝ բարոյական և էթիկական դրական սկզբունքների ու չափորոշիչների վրա հիմնված վարքագիծ է: Այն կապող օղակ է էթիկական դրական սկզբունքների և կրթության որակի միջև և խոչընդոտում է կոռուպցիայի դրսևորումները:
2. **Ազնվությունը** ցանկացած խարդախության, ստախոսության, խաբեության, գողության, շորթման և այլ անազնիվ կամ փաստացի քրեական բնույթի արարքների բացառումն է:
3. **Ճշմարտացիությունը** բուհի դերակատարների միջև բոլոր հարաբերություններում չստելն է:
4. **Թափանցիկությունը** բուհի դերակատարների բացահայտ, կանխատեսելի և հասկանալի գործունեությունն է, որը խթանում է շահակիցների մասնակցությունը և հաշվետվողականությունը:
5. **Այլոց հանդեպ հարգանքը** աշխատանքային գործունեության մեջ կոլեգիալության և արժանապատվության պահպանումն է, ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանվածությունը:
6. **Վստահությունը** այլոց ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցերում վստահելու կարողությունն է:
7. **Հաշվետվողականությունը** բուհի բոլոր դերակատարների լիազորությունների թափանցիկ և պատշաճ իրականացումն է:
8. **Արդարացիությունը** միմյանց հետ հարաբերվելիս բուհի բոլոր դերակատարների անկողմնակալ, առանց խտրականության և ազնիվ վարվեցողությունն է:
9. **Հավասարությունը, արդարությունը և սոցիալական արդարությունը** արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականությունն ու գործելակերպն են՝ կապված տարիքի, հաշմանդամության, գենդերի ու գենդերային ինքնության,

ռասայի, էթնիկ պատկանելության, կրոնի ու դավանանքի, սեռական կողմնորոշման և բարձրագույն կրթության հասանելիության հետ:

10. **Կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական և էթիկական ղեկավարումն ու կառավարումը** բուհի ղեկավարումն ու կառավարումն են՝ հիմնված համապատասխան բոլոր դերակատարների ժողովրդավարական ներգրավվածության և էթիկական հիմունքներով առաջնորդություն իրականացնելու վրա:
11. **Որակյալ կրթությունը** բուհի բոլոր դերակատարների անվերապահ հանձնառությունն է բարձր որակի կրթություն տրամադրելու համար:
12. **Անձի կատարելագործումը և համակարգի բարելավումը** բուհի բոլոր դերակատարների մասնագիտական պարտավորությունն է՝ ապահովելու մասնագիտական զարգացումը և համակարգի շարունակական բարելավումը:
13. **Ինստիտուցիոնալ ինքնավարությունը/ինստիտուցիոնալ անկախությունը** բուհի բոլոր դերակատարների կողմից իրենց համապատասխան գործունեության մեջ ակադեմիական ազատության սկզբունքի կարևորումն ու պահպանումն է:
14. **Միջազգային համագործակցությունը** բուհի բոլոր դերակատարների կողմից կրթական գործունեության մեջ դրական միջազգային համագործակցության կարևորության ճանաչումն ու ներգրավվածությունն է:

1. Ակադեմիական աշխատակազմը ներառում է համալսարանի պրոֆեսորադասախոսական (հիմնական, համատեղող, հրավիրյալ), այդ թվում՝ **ակադեմիական ղեկավար պաշտոններ զբաղեցնող և դասավանդող կազմը:**
- 1.1. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները ներքին և արտաքին շահակիցների հետ բոլոր հարաբերություններում պետք է առաջնորդվեն **ակադեմիական բարեվարքության սկզբունքին** համարժեք: Ակադեմիական անձնակազմի անդամները պարտավոր են՝
 - 1.1.1. բարձրագույն կրթության համակարգի առաքելությանը համահունչ՝ դրսևորել ազնիվ ու բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու և այն տարածելու վարքագիծ,
 - 1.1.2. նպաստել կրթության որակի բարձրացմանը՝ բացառելով կոռուպցիոն դրսևորումները:
- 1.2. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները ուսանողների դասավանդումը, ուսուցումն ու գնահատումն իրականացնելու աշխատանքներում պետք է պահպանեն **ազնվության սկզբունքը:** Ակադեմիական անձնակազմի անդամները պարտավոր են՝
 - 1.2.1. անաչառ կերպով գնահատել ուսանողների բոլոր տեսակի աշխատանքները՝ հաշվի առնելով դրանց էությունը և բացառելով ցանկացած արատավոր երևույթ (օրինակ՝ դրամական կաշառք, սեռական բնույթի գործողություններ),
 - 1.2.2. ուսանողների գրագողության բոլոր դեպքերը դիտարկել անկողմնակալության սկզբունքով՝ քննությունների վերահսկման արդյունքում բացառելով խարդախության դեպքերը,
 - 1.2.3. ուսումնառությունը կազմակերպել այնպես, որ ուսանողները կարողանան իրականացնել դասընթացի ուսումնական ծրագիրը և առավելագույնս բարեհաջող կերպով հանձնեն քննությունները՝ չենթարկվելով որևէ անազնիվ ճնշման (օրինակ՝ դասախոսների հեղինակած դասագրքերի գնում, մասնավոր վճարի դիմաց լրացուցիչ դասերի հաճախում),
 - 1.2.4. հետազոտական աշխատանքների արդյունքների ստացման և դրանց մասին տեղեկացնելու ժամանակ խուսափել խարդախությունից, ստախոսությունից և խաբեությունից,

- 1.2.5. հավատարիմ մնալ «Ազնիվ և թափանցիկ հաշվապահություն» սկզբունքին՝ խուսափելով ցանկացած ֆինանսական խարդախություն կամ գողություն կատարելուց (օրինակ՝ պայմանագրերի բաշխման և գնումների գործընթացներում),
- 1.2.6. թե՛ ավագ, թե՛ կրտսեր գործընկերների և այլ դերակատարների հետ (օրինակ՝ բուհի ուսանողներ, քաղաքական համակարգ, գործարար համայնք և առավել լայն հանրություն) միջանձնային հարաբերություններում լինել ճշմարտախոս:
- 1.3. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց վարքագծում պետք է պահպանեն **ճշմարտացիության սկզբունքը**: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝**
- 1.3.1. բարձրագույն կրթության համակարգում տիրող բոլոր հարաբերություններում չստել, ասել ճշմարտությունը,
- 1.3.2. իրականացնել հետազոտական աշխատանքներ՝ հիմնվելով ակադեմիական բարեվարքության ու սոցիալական պատասխանատվության վրա և հրապարակայնացնելով հետազոտության արդյունքները,
- 1.3.3. ապահովել ուսանողների դասավանդումը և ուսուցումն այնպես, որ նրանք կարողանան ձեռք բերել գիտելիքներ հետազոտության արդյունքների հիման վրա,
- 1.3.4. դրսևորել հարգանք քննադատական հիմնավորված վերլուծությունների, մտքերի ազատ փոխանակման և խոսքի ազատության նկատմամբ:
- 1.3.5. ապահովել կազմակերպական և ֆինանսական այնպիսի կառուցվածքների ստեղծում, որոնք կխթանեն գիտելիքների ստացումը ճշմարտացիության սկզբունքի հիման վրա (օրինակ՝ համապատասխան միջոցներ հետազոտության համար), եթե համալսարանում զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:
- 1.4. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է գործեն **թափանցիկության սկզբունքներին** համահունչ: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝**
- 1.4.1. կազմել և տրամադրել ազատ ու բաց տեղեկատվություն (մասնագիտական կրթական ծրագրի և դասընթացների նկարագրեր, կրթական ծրագրերի

արդյունքում որակավորումներ, գիտելիքների գնահատման կանոնակարգեր, դասախոսական կազմի որակավորումներ, ուսանողների թիվ) իրենց ծավալած գործունեության և լիազորությունների սահմաններում՝ չխախտելով անձնական տվյալների գաղտնիության լիարժեք պահպանումը,

1.4.2. ապահովել նշանակումների և պաշտոնի առաջխաղացումների կատարման հիմքում ընկած համապատասխան ընթացակարգերի թափանցիկությունը:

1.5. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց վարքագծում պետք է պահպանեն **«Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքը**: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.5.1. դասավանդման և ուսուցման ընթացքում ուսանողների հետ ունեցած հարաբերություններում ցուցաբերել լիարժեք հարգանք,

1.5.2. ապահովել կոլեգիալության սկզբունքը գործընկերների հետ հարաբերություններում,

1.5.3. ցուցաբերել ակադեմիական ազատություն իրենց լիազորությունների շրջանակում,

1.5.4. ձգտել աշխատավայրում չենթարկվելու բռնությունների և ոտնձգությունների,

1.5.5. ցուցաբերել ոչ խտրական, թափանցիկ և հավասար վերաբերմունք հետազոտական գործունեություն իրականացնող անձանց աշխատանքի ընդունելիս և նրանց աշխատանքի գնահատման ու փորձաքննության ընթացքում:

1.6. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց վարքագծում պետք է ցուցաբերեն **վստահության սկզբունքը**: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.6.1. ապահովել գործընկերների, ուսանողների, ազգային և միջազգային գիտահետազոտական ակադեմիական հանրույթի հետ հարաբերություններում փոխադարձ վստահություն՝ նպաստելով գաղափարների ազատ փոխանակմանը, ստեղծագործ մտքի և անձի զարգացմանը,

1.6.2. աշխատանքային գործունեության ընթացքում վստահել վերադասներին և իրենց ենթակայության տակ գտնվողներին:

1.7. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար՝ պահպանելով

հաշվետվողականության սկզբունքը: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.7.1. Իրենց ծավալած գործունեության համար, ըստ ինստիտուցիոնալ հիերարխիայի, հաշվետու լինել վերադասին կամ կառավարման մարմիններին, մասնագիտական մարմիններին, ՀՀ ԿԳ նախարարությանը, ՈԱԱԿ-ին, ՀՀ կառավարությանը,

1.7.2. կոլեգիալության սկզբունքի համաձայն՝ հաշվետու լինել ամբողջ աշխատակազմի առջև, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:

1.8. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց ծավալած գործունեության շրջանակներում պետք է առաջնորդվեն արդարացիության սկզբունքով: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.8.1. դրսևորել օրինական, թափանցիկ, անկողմնակալ, կանխատեսելի, հետևողական և օբյեկտիվ վարքագիծ՝ կապված դասավանդման, ուսանողների գնահատման, հետազոտության, պաշտոնների առաջխաղացման և համալսարանում ցանկացած այլ գործունեության հետ,

1.8.2. ցուցաբերել նախաձեռնություն աշխատողների համալրման, բուհի հասանելիության ընդլայնման ուղղությամբ, արդարացիությունը ապահովելուն ուղղված քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:

1.9. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է գործեն հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքով: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.9.1. ուսանողների և գործընկերների հետ բոլոր հարաբերություններում ցուցաբերել անկողմնակալ վերաբերմունք՝ կապված սեռի, հաշմանդամության, գենդերի, ռասայի, ազգային պատկանելության, կրոնի և սեռական կողմնորոշման հետ,

1.9.2. ապահովել համալսարանի «լայն հասանելիությունը» ոչ միայն հասարակության թերներկայացված շերտերի համար, այլև այդպիսի ուսանողներին օժանդակություն ցույց տալը՝ ուղղված բարձրագույն կրթության ուսումնառության ծրագրերում վերջիններիս առաջընթացի հետ կապված խոչընդոտները հաղթահարելուն և այդ ծրագրերում ընդգրկված մնալուն,

- 1.9.3. կրել պատասխանատվություն հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքների վերաբերյալ քաղաքականություն մշակելու, ներդնելու, մշտադիտարկելու առումով, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ,
- 1.9.4. կրել պատասխանատվություն համալսարանի ակտիվների, ռեսուրսների և շրջակա միջավայրի խելամիտ կառավարման համար, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:
- 1.10. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները իրենց վարքագծի բոլոր դրսևորումներում պետք է առաջնորդվեն հաշվետվողականության և կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական և էթիկական ղեկավարման ու կառավարման սկզբունքներով:** Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝
- 1.10.1. ապահովել ուսանողների, դասավանդողների, գիտական և վարչական աշխատողների ներգրավվածությունը որոշումներ կայացնելու հարցում, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ,
- 1.10.2. ապահովել համալսարանի ղեկավարումն ու կառավարումը՝ հիմնված աշխատակազմի (դասախոսական և ոչ դասախոսական, ակադեմիական և ոչ ակադեմիական)՝ ժողովրդավարական հիմունքներով լիարժեք ներգրավվածության վրա, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:
- 1.11. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է անվերապահորեն առաջնորդվեն «Որակյալ կրթություն» սկզբունքով:** Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝
- 1.11.1. ուսանողներին լիարժեք կերպով ապահովել ամենաբարձր որակի դասավանդմամբ և ուսումնառությամբ՝ հնարավորինս նպաստելով նրանց բարձր առաջադիմությանը և նորանոր ձեռքբերումներին,
- 1.11.2. ապահովել ուսումնական և գիտահետազոտական հնարավորինս բարձր արդյունքներ՝ նպաստելով իրենց առարկաների գծով գիտելիքի առավելագույն հնարավոր զարգացմանը,
- 1.11.3. մշակել բարձր որակի կրթություն տրամադրելու քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապահովելով անհրաժեշտ պատշաճ միջոցներ դրանց

իրականացման համար, եթե զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:

1.12. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավման անհրաժեշտությունը և առաջնորդվեն «Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում » սկզբունքով: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.12.1. զարգացնել անձնական մասնագիտական որակները՝ ելնելով համալսարանի, ազգային բարձրագույն կրթության համակարգի, իրենց գիտաճյուղի ոլորտում միջազգային գիտահետազոտական լայն համայնքի ընթացիկ զարգացումներից,

1.12.2. զարգացնել անձնական մասնագիտական որակները ղեկավարման և կառավարման հմտությունների տեսակետից՝ նպաստելով համալսարանի, բարձրագույն կրթության ազգային և միջազգային համակարգերի բարելավմանը, նորամուծությունների ներդրմանը, ինչպես նաև փոփոխություններին հարմարվելու ճկունությանը, եթե համալսարանում զբաղեցնում են ղեկավարման և կառավարման բարձր պաշտոններ:

1.13. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն և առաջնորդվեն «Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն» սկզբունքով: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1.13.1. մասնակցել **ինստիտուցիոնալ ինքնավարության/ ինստիտուցիոնալ անկախության** հասնելու և պահպանելու խնդրի հանրային քննարկմանը, եթե համալսարանի կենտրոնացված քաղաքական հսկողությունը թույլ չի տալիս դա կամ սպառնում է դրան,

1.13.2. ընդունել դասախոսի և դասախոսների խմբի համապատասխան ինքնավարությունը/անկախությունը իրենց ղեկավարումն ու կառավարումն իրականացնելիս, եթե համալսարանում զբաղեցնում են բարձր պաշտոններ:

1.14. ՇՊՀ-ի ակադեմիական աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն միջազգային համագործակցության սկզբունքի կարևորությունը: Ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

- 1.14.1. դասավանդումը, գիտական գործունեությունը և հետազոտական աշխատանքները իրականացնելիս հիմնվել իրենց դասավանդած առարկայի գծով միջազգային մտածելակերպը խորապես ընդգրկելու վրա,
- 1.14.2. ստեղծել ուսանողների համար միջազգային փոխանակման հնարավորություններ և փնտրել միջոցներ դրան աջակցելու համար,
- 1.14.3. խթանել միջազգային համագործակցության մեջ աշխատակիցների և ուսանողների ներգրավման հնարավորությունները՝ խուսափելով շահադիտական նկատառումներից:

2. Ուսանողների համակազմը ներառում է բուհի բակալավրի (առկա, հեռակա) մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով սովորողներին:

2.1. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի յուրաքանչյուր անդամ համալսարանի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) և ուսանողության հետ բոլոր հարաբերություններում պետք է առաջնորդվի **ակադեմիական բարեվարքության սկզբունքին համարժեք: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝**

2.1.1. ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելը ընկալել որպես պարտականություն,

2.1.2. դրսևորել բարոյական և էթիկական սկզբունքներին և չափորոշիչներին համահունչ վարքագիծ :

2.2. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է հավատարիմ լինեն **ազնվության սկզբունքին: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝**

2.2.1. լինել ճշմարտախոս բուհի ներքին և արտաքին շահակիցների հետ հարաբերություններում,

2.2.2. գնահատման ներկայացնել բացառապես իրենց կողմից կատարված աշխատանքները,

2.2.3. խուսափել ցանկացած տեսակի գրագողությունից և խարդախությունից (ներառյալ համացանցային խարդախությունները, ինչպես օրինակ՝ «Էսսեների բանկից» օգտվելը),

2.2.4. չառաջարկել որևէ տեսակի կաշառք և չկատարել սեռական բնույթի որևէ առաջարկ՝ գիտելիքներին ոչ համարժեք գնահատականներ ստանալու նպատակով,

2.2.5. զերծ մնալ հաստատության ներսում գողությունից, դրամաշորթությունից և այլ բնույթի հակաիրավական արարքներից:

2.3. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները իրենց վարքագծում պետք է պահպանեն **ճշմարտացիության սկզբունքը: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝**

2.3.1. բարձրագույն կրթության համակարգում ընդունված բոլոր հարաբերություններում չստել և ասել ճշմարտությունը և նպաստել ճշմարտության բացահայտմանը,

- 2.3.2. զարգացնել սեփական գիտելիքները և ընդգրկվել ուսումնառության պահանջներին համապատասխան հետազոտական աշխատանքներում:
- 2.4. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է գործեն **թափանցիկության սկզբունքներին** համահունչ: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են.
- 2.4.1. հրապարակել հետազոտական գործունեության արդյունքները,
- 2.4.2. տրամադրել տեղեկատվություն ուսանողական կառույցների գործունեության մասին, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են բարձր պաշտոններ:
- 2.5. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները իրենց վարքագծում պետք է պահպանեն **«Հարգանք այլոց նկատմամբ» սկզբունքը**: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են.
- 2.5.1. ցուցաբերել լիարժեք հարգանք բուհի ներքին և արտաքին շահակիցների հետ փոխհարաբերություններում,
- 2.5.2. ցուցաբերել հարգալից վերաբերմունք ուսումնական և հետազոտական աշխատանքների իրականացման հարաբերություններում,
- 2.5.3. հիմնվել ուսանողական լայն զանգվածի կարծիքի վրա ուսանողական մարմինների բոլոր գործառույթներում, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են բարձր պաշտոններ:
- 2.6. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները իրենց վարքագծում պետք է կիրառեն **վստահության սկզբունքը**: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝
- 2.6.1. ապահովել վստահության մթնոլորտ համալսարանի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) և ուսանողության հետ բոլոր հարաբերություններում:
- 2.7. ՇՊՀ-ի ուսանողական կառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող ուսանողները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար՝ պահպանելով **հաշվետվողականության սկզբունքը**: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝

- 2.7.1. իրենց ծավալած գործունեության համար լինել հաշվետու ուսանողական խորհուրդներին և կազմակերպություններին, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են բարձր պաշտոններ,
- 2.7.2. իրենց ծավալած գործունեության համար, կոլեգիալության սկզբունքի համաձայն, լինել հաշվետու ուսանողական համակազմին, եթե կառավարման մարմիններում ներկայացուցիչներ են:
- 2.8. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները իրենց ծավալած գործունեության շրջանակներում պետք է առաջնորդվեն արդարացիության սկզբունքով:** Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝
- 2.8.1. լինել արդարացի ուսանողական համայնքի և բուհի աշխատակազմի /ակադեմիական և ոչ ակադեմիական/ հետ հարաբերություններում:
- 2.9. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է ապահովեն հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքը:** ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝
- 2.9.1. չդրսևորել որևէ տեսակի խտրականություն (սեռի, հաշմանդամության, գենդերի, ռասայի, ազգային պատկանելության, կրոնի և սեռական կողմնորոշման) համակուրսեցիների և բուհի աշխատակազմի (ակադեմիական և ոչ ակադեմիական) հետ հարաբերություններում,
- 2.9.2. որևէ ձևով չներկայացնել սեռական կողմնորոշումը և չքարոզել այն բուհի ներսում,
- 2.9.3. տեսնել բարձրագույն կրթության համակարգում իրենց առաջընթացը (անձնական աճը)՝ որպես բուհի ակադեմիական համայնքի լիարժեք անդամ,
- 2.9.4. կրել պատասխանատվություն հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքների վերաբերյալ քաղաքականություն մշակելու, ներդնելու, մշտադիտարկելու առումով, եթե ընդգրկված են կառավարման մարմիններում:
- 2.10. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները իրենց վարքագծի բոլոր դրսևորումներում պետք է առաջնորդվեն հաշվետվողականության և կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական ու էթիկական ղեկավարման և կառավարման սկզբունքներով:** Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝

- 2.10.1. դրական արձագանք տալ բուհի կառավարմանը մասնակցելու ցանկացած հնարավորությանը,
- 2.10.2. ունենալ լիարժեք մասնակցություն որակի ապահովման և բարելավման գործընթացին՝ ապահովելու համար կառուցողական հետադարձ կապ դասավանդման և ուսումնառության միջև,
- 2.10.3. ապահովել ուսանողական ներկայացուցչական մարմինների կազմավորումը՝ լիարժեք ժողովրդավարական հիմունքներով:
- 2.11. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է գիտակցեն և առաջնորդվեն «Որակյալ կրթություն» սկզբունքով:** Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝
- 2.11.1. հանձն առնել իրենց ակադեմիական աշխատանքը լավագույն որակով կատարելու պարտականություն՝ ձգտելով ձեռք բերել համապատասխան գիտելիքներ (որակյալ կրթություն),
- 2.11.2. նպաստել բուհի ընդհանուր կրթական որակի բարելավմանը՝ որակի գնահատման և բարձրացման գործընթացներին մասնակցելու միջոցով,
- 2.11.3. նպաստել ազգային և միջազգային բարձրագույն կրթության համակարգերի որակի բարձրացմանը, եթե ազգային և միջազգային ուսանողական մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներ են:
- 2.12. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է գիտակցեն բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավումը և առաջնորդվեն «Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում» սկզբունքով:** Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝
- 2.12.1. ձգտել իրենց ակադեմիական աշխատանքի միջոցով հասնելու անձի առավելագույն կատարելագործմանը,
- 2.12.2. արժևորել բուհի ընդհանուր համակարգի բարելավման գործընթացը՝ բաց չթողնելով դրան նպաստող ցանկացած առիթ (օրինակ՝ մասնակցություն որակի բարձրացման գործընթացներին),
- 2.12.3. օժանդակել բարձրագույն կրթության համակարգի կատարելագործմանը ինստիտուցիոնալ (ենթակառուցվածքային), ազգային և միջազգային մակարդակներում, եթե ընդգրկված են ներկայացուցչական մարմիններում:

2.13. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է գիտակցեն և առաջնորդվեն **«Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն» սկզբունքով**: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝

2.13.1. ունենալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն և կարևորել այն,

2.13.2. կրել հատուկ պարտավորություն համապատասխան ինստիտուցիոնալ ինքնավարությունը/ինստիտուցիոնալ անկախությունը հանրային քննարկման ներկայացնելու համար:

2.14. ՇՊՀ-ի ուսանողական համակազմի անդամները պետք է գիտակցեն **միջազգային համագործակցության սկզբունքի** կարևորությունը: Ուսանողական համակազմի անդամները պարտավոր են՝

2.14.1. ձգտել դառնալու միջազգային գիտական համայնքի անդամներ՝ իրենց կրթական փորձառության շրջանակում լիովին ինտեգրվելով միջազգային հեռանկարներին,

2.14.2. մասնակցել իրենց կրթական ծրագրերի շրջանակներում առաջարկվող միջազգային փոխանակման ծրագրերին,

2.14.3. առաջարկել բուհին ուսանողների միջազգային համագործակցության համար առավելագույն հնարավորություններ՝ փոխանակման ծրագրեր, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են պաշտոններ,

2.14.4. տրամադրել օժանդակ խորհրդատվություն բարձրագույն կրթության միջսահմանային ծրագրերի ընտրության հարցում, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են պաշտոններ,

2.14.5. ապահովել բավարար միջազգային համագործակցություն համապատասխան ներկայացուցչական կազմակերպությունների միջև, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են պաշտոններ,

2.14.6. բուհի ակադեմիական աշխատակազմին ներկայացնել միջազգային համագործակցության ծրագրեր, եթե ուսանողական ներկայացուցչական մարմիններում զբաղեցնում են պաշտոններ:

3. Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձանց խմբին են պատկանում ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչը, իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժնի վարիչը, հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչը, անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի վարիչը, տնտեսական գործունեության, գնումների և լրացուցիչ ծառայությունների համակարգման բաժնի վարիչը, նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչը, ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-զբաղարանի պետը, որակի ապահովման և կառավարման կենտրոնի պետը, ուսանողների աջակցության բաժնի վարիչը, միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչը, ավագ դպրոցի տնօրենը, մշակույթի վարժարանի տնօրենը, մարզական բազայի համակարգողը:

3.1. Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք համալսարանի ներքին և արտաքին շահակիցների հետ բոլոր տիպի փոխհարաբերություններում պետք է առաջնորդվեն **ակադեմիական բարեվարքության սկզբունքին** համարժեք: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝

3.1.1. դրսևորել բարոյական և էթիկական դրական սկզբունքներին և չափորոշիչներին համահունչ վարքագիծ ներքին և արտաքին շահակիցների հետ հարաբերություններում,

3.1.2. լինել պատասխանատու բուհի ուսումնական գործընթացը խթանող ծառայությունների համար:

3.2. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է հավատարիմ լինեն **ազնվության սկզբունքին**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝

- 3.2.1. ապահովել վարքագիծ, որը կբացառի ցանկացած խարդախություն, ստախոսություն, խաբեություն, գողություն, շորթում կամ որևէ այլ անազնիվ արարք,
- 3.2.2. լինել ճշմարտախոս բուհական համակարգի բոլոր օղակներում՝ գործընկերների ու այլ դերակատարների հետ միջանձնային հարաբերություններում,
- 3.2.3. հավատարիմ մնալ «ազնիվ և թափանցիկ հաշվապահության» սկզբունքին և խուսափել ֆինանսական խարդախություն կամ գողություն կատարելուց (օրինակ՝ պայմանագրերի բաշխման և գնումների գործընթացներում),
- 3.2.4. լինել ճշմարտախոս բուհի ներքին և արտաքին շահակիցների հետ հարաբերություններում:
- 3.3. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք իրենց վարքագծում պետք է պահպանեն **ճշմարտացիության սկզբունքը**:** Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.3.1. ապահովել կազմակերպական և ֆինանսական այնպիսի կառուցվածքների ստեղծում, որոնք կխթանեն հիմնարար գիտելիքների ձեռքբերումը:
- 3.4. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է գործեն **թափանցիկության սկզբունքին**** համահունչ: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.4.1. գործել բացահայտ, կանխատեսելի և հասկանալի,
- 3.4.2. իրենց ղեկավարության ներքո գտնվող աշխատակազմին, բուհի ուսանողներին, համալսարանի դիմորդներին, հանրությանը, մամուլին և պետական մարմիններին անհրաժեշտության դեպքում տրամադրել առավելագույնս թափանցիկ տեղեկատվություն՝ չխախտելով անձնական տվյալների գաղտնիության սկզբունքը,
- 3.4.3. ապահովել նշանակումների և պաշտոնի առաջխաղացումների տեսանելիությունը:
- 3.5. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք իրենց վարքագծում պետք է պահպանեն **«Հարգանք****

- այլոց նկատմամբ» սկզբունքը:** Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.5.1. դրսևորել հարգալից վերաբերմունք այն աշխատակազմի նկատմամբ, որի հանդեպ պարտավորություններ ունեն,
- 3.5.2. կարևորել համագործակցելու կարողությունը, այն է՝ կոլեգիալությունը, բուհի այլ դերակատարների (օրինակ՝ ակադեմիական աշխատակազմի և ուսանողների) հետ հարաբերություններում:
- 3.6. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք իրենց վարքագծում պետք է ցուցաբերեն **վստահության սկզբունքը:** Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.6.1. ստեղծել փոխվստահության մթնոլորտ իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների հետ հարաբերություններում:
- 3.7. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար՝ պահպանելով **հաշվետվողականության սկզբունքը:** Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.7.1. հաշվետու լինել բուհի ակադեմիական բարձր ղեկավարության, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառավարման մարմինների առջև համապատասխան բնագավառների աշխատանքի համար,
- 3.7.2. պետական գումարներն օգտագործելիս հաշվետու լինել նաև ՀՀ կառավարությանն ու համապատասխան գերատեսչություններին:
- 3.8. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք իրենց ծավալած գործունեության շրջանակներում պետք է առաջնորդվեն **արդարացիության սկզբունքով:** Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.8.1. լինել արդարացի իրենց ենթակայության ներքո գտնվող աշխատակազմի հետ հարաբերություններում,

- 3.8.2. մշակել և իրագործել արդարացիությունը խթանող քաղաքականություն բուհի՝ իրենց վստահված բնագավառներում (օրինակ՝ աշխատողների համալրման հարցում):
- 3.9. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է ապահովեն **հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքը**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.9.1. պայքարել ռասայական խտրականության և կողմնակալության դեմ,
- 3.9.2. մշակել և իրականացնել հավասարության, արդարության և սոցիալական արդարության առավել լայն ձեռքբերումներին աջակցող քաղաքականություն:
- 3.10. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք իրենց վարքագծի բոլոր դրսևորումներում պետք է առաջնորդվեն **հաշվետվողականության և կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական և էթիկական ղեկավարման ու կառավարման սկզբունքներով**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.10.1. իրենց պատասխանատվության տակ գտնվող գործունեության կոնկրետ հայեցակետի կառավարման հարցում դրսևորել էթիկական մոտեցումներ, ինչպես նաև ապահովել աշխատակազմի պատշաճ ներգրավվածություն ժողովրդավարական հիմունքներով:
- 3.11. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է առաջնորդվեն **«Որակյալ կրթություն» սկզբունքով**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝
- 3.11.1. մշակել քաղաքականություն և համապատասխան ընթացակարգ՝ բուհական գործունեության՝ իրենց պատասխանատվությանը ենթակա ուղղություններում հնարավոր ամենաբարձր որակն ապահովելու համար,
- 3.11.2. լիարժեք աջակցություն ցուցաբերել աշխատակազմին որակյալ կրթության քաղաքականությունը իրականացնելու հարցում՝ տրամադրելով անհրաժեշտ պատշաճ միջոցներ:

3.12. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է գիտակցեն բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավումը և առաջնորդվեն **«Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում» սկզբունքով**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝

3.12.1. կատարելագործել ղեկավարման և կառավարման իրենց անձնական հմտությունները,

3.12.2. բուհի համակարգային կատարելագործման նպատակով խթանել նորարարական տեխնոլոգիաների ներմուծումը բուհ և ապահովել փոփոխություններին հարմարվելու ճկունություն:

3.13. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է գիտակցեն և առաջնորդվեն **«Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն» սկզբունքով**: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝

3.13.1. արժևորել իրենց ինքնավարությունը՝ լիարժեք ու գիտակցված ձևով աջակցելով ամբողջ ակադեմիական ղեկավարության ինքնավարությանը և դիմակայելով արտաքին անտեղի միջամտություններին,

3.13.2. գիտակցել, որ իրենց դերը բուհի ակադեմիական գործառույթների ընդհանուր ինքնավարությանը/անկախությանը աջակցելն է և ոչ թե դրանց վրա հսկողություն իրականացնելը:

3.14. ՇՊՀ-ի մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պետք է գիտակցեն **միջազգային համագործակցության սկզբունքի** կարևորությունը: Մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են՝

3.14.1. խթանել միջազգային համագործակցությունը և կազմակերպված միջոցառումների իրականացումը՝ տրամադրելով անհրաժեշտ միջոցներ,

3.14.2. միանալ իրենց պարտականությունների բնագավառներին համապատասխան միջազգային ցանցերին՝ իրենց աշխատանքով լիովին ինտեգրվելով միջազգայնացմանը և նպաստելով դրան:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ

Կարգապահական տույժերը պիտի հիմնվեն արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պիտի համապատասխանեն գործող օրենսդրության պահանջներին: Կարգապահական տույժի կիրառման դեպքում պիտի հաշվի առնվեն խախտման ծանրությունը, դրա հետևանքները, դերակատարի մեղքը, խախտումը կատարելու հանգամանքները և նախկինում կատարած աշխատանքը:

Գիտական խորհրդի կազմից անհրաժեշտ է ընտրել էթիկայի հանձնաժողով՝ կազմված 5 անձից, որից 1-ը՝ ուսանող:

Փաստաթղթի որևէ դրույթի խախտման դեպքում բողոքները պետք է ռեկտորին ներկայացնել գրավոր՝ համապատասխան հիմքերով:

Էթիկայի հանձնաժողովը պետք է որոշի՝

- արդյոք ներկայացված են խախտման փաստի վերաբերյալ ողջամիտ հիմքեր,
- արդյոք փաստերը էթիկական վարվեցողության խախտումներ են:

Էթիկայի հանձնաժողովը պարտավոր է պահանջել գրավոր մեկնաբանություն էթիկայի սկզբունքը խախտող դերակատարից: Դերակատարը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրագիր: Հանձնաժողովը իրավունք ունի փաստի պարզաբանման նպատակով հրավիրելու և լսելու բուհի տարբեր շահակիցների: Հանձնաժողովը տասն աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնել որոշում:

Էթիկայի հանձնաժողովի կայացրած որոշումը կարող է հիմք հանդիսանալ՝

- ակադեմիական աշխատակազմի (այդ թվում՝ ղեկավար և կառավարման բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց) և մասնագիտական բնույթի ծառայությունների գծով կառավարման բարձր պաշտոն զբաղեցնողների համար՝ անելու՝

ա) բանավոր նախազգուշացում,

գ) գրավոր նախազգուշացում,

բ) նկատողություն,

զ) խիստ նկատողություն,

դ) լիազորությունների կասեցում,

ե) աշխատանքից ազատում:

- ուսանողների համար՝

ա) բանավոր նախազգուշացում,

- բ) գրավոր նախագգուշացում,
- գ) ակադեմիական գնահատականի փոփոխում,
- դ) ուսման վարձի մասնակի զեղչից ու կրթաթոշակից զրկում,
- ե) այլ իրավունքների և արտոնությունների սահմանափակում,
- զ) համալսարանից հեռացում:

Հանձնաժողովը կայացրած որոշման մասին գրավոր ներկայացնում է բուհի ռեկտորին և խախտումը կատարող համապատասխան դերակատարին, որը կարող է կայացրած որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում բողոքարկել՝ գրավոր դիմելով բուհի ռեկտորին: Բողոքարկման ավարտից հետո ռեկտորը կարգապահական տույժի վերաբերյալ տալիս է հրաման, որը պահպանվում է անձնական գործում մեկ տարի ժամկետով, եթե տվյալ ուսումնական տարում չի ստացել երկրորդ տույժը: